# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Աղավնատուն համայնք, գ.Աղավնատուն, Ն.Մաթևոսյան
Պ.25, Հեռ. 0231-6-00-75 , axavnatungp@mail.ru

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N Ա-135
*12 օգոստոս 2013թ.*

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ուղարկվում Աղավնատուն համայնքի 2013թվականի բյուջեի փոփոխված տարբերակը՝ ավագանու «Աղավնատուն համայնքի բյուջեն հաստատելու մասին» N29-Ն որոշումը և նախահաշվները:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Aug 12 2013 12:20 PM  Աշոտ Գրիգորյան

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Զոհրաբյան*

ՀՀ ... ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 7308-13
«14» 08 2013թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ. Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, 0231 6-00 75, axavnatungp@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

09 օգոստոսի 2013թվականի N 28

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ, ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2013թվականի հուլիսի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամի չափով սահմանելու հետ կապված՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1.Աղավնատուն համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության «հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԳԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԲՈՐԻՍԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԲԱՅՎԱՅԻ
4. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
6. ՄԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
7. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«9» «օգոստոս» 2013թ

գ.Աղավնատուն

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն գյուղական
համայնքի ավագանու
2013թ. օգոստոսի 9-ի
**թիվ 6 հերթական նիստի**
N 28 որոշման

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ»ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013թ. ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| 01-01-2013թ | | | | 01-07-2013թ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնի դրույքաչափը | | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Տնօրեն | 1 | 83500 | 1 | Տնօրեն | 1 | 83500 |
| 2 | Գրադ.վարիչ | 1 | 66000 | 2 | Գրադ.վարիչ | 1 | 66000 |
| 3 | Գլխ.հաշվապահ | 1 | 65000 | 3 | Գլխ.հաշվապահ | 1 | 65000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 60500 | 4 | Գեղմասվար | 1 | 60500 |
| 5 | հրահանգիչ-խմբավար | 1 | 55000 | 5 | հրահանգիչ-խմբավար | 1 | 59524 |
| 6 | Պահակ | 1 | 72000 | 6 | Պահակ | 1 | 72000 |
| 7 | Սանտ.մեխանիկ | 1 | 54000 | 7 | Սանտ.մեխանիկ | 1 | 59524 |
| 8 | Օժանդակ բանվոր | 1 | 54000 | 8 | Օժանդակ բանվոր | 1 | 59524 |
| 9 | Հավաքարար | 1 | 54000 | 9 | Հավաքարար | 1 | 59524 |
| | | | | | | | |
| | Ընդամենը | 9 | 564000 | | Ընդամենը | 9 | 585096 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, 0231-6-00-75, axavnatungp@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2013թվականի N 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 27-ը հունիսի 2013 թվականի N661-Ն որոշմամբ,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)Բյուջեի եկամուտները ավելացնել 158.7 հազ.(մեկ հարյուր հիսուն ութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամով, ՀՀ կառավարության 661-Ն որոշմամբ նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տրամադրվելու կապակցությամբ,կապված նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխության հետ:
Հատված 1-ում ընդամենը եկամուտներ 59403.1 թիվը փոխարինել 59561.8 թվով:
2) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5121 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 6000.0 հազար (վեց միլիոն) ՀՀ դրամ ծախսը ուղղել 01 բաժնի 6 խմբի 1-ին դասի 5121 հոդվածին՝ խոտամաքիչ-հակավորող գյուղատնտեսական գործիք ձեռք բերելու համար:
3) 04 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածից 1000.0 հազար(մեկ միլիոն) ՀՀ դրամ պակասեցնել և ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5112 հոդվածին այն 1000.0 հազար(մեկ միլիոն) ՀՀ դրամից դարձնելով 2000.0 հազար(երկու միլիոն) դրամ:
4) 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4111 հոդվածը ավելացնել 158.7 հազ.(մեկ հարյուր հիսուն ութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամով:
Բյուջեի ընդամենը ծախսեր՝ 73721.1 թիվը փոխարինել 73879.8 թվով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԲՈՐԻՍԻ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԲԵԳԼԱՐԻ

4. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ

6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

7. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«9» «օգոստոս» 2013թ

գ.Աղավնատուն